ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԴԱՎԻԹ ԱԼԵՔՍԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐՈ-ՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻ-ՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տնտեսական զարգացումների արդի պայմաններում ցանկացած երկրի կառավարության գործունեության և պետական կարգավորման քաղաքականության իրականացման համատեքստում առանցքային ուղղություն է ազատ մրցակցության պայմանների և միջավայրի ապահովումը:

Շուկայական հարաբերությունների զարգացման և արմատավորման շարժիչ ուժը տնտեսավարող սուբյեկտների միջև ազատ և բարեխիղճ մրցակցության ապահովումն է: Այս առումով յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության առանցքային ուղղությունը պետք է լինի մրցակիցների համար առողջ և բարեխիղճ մրցակցային միջավայրի ապահովմանն ուղղված քաղաքականության իրականացումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցակցությունը հանդես է գալիս որպես տնտեսական համակարգի արդյունավետ կենսագործունեության գլխավոր նախապայման:

Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքում ագրարային ոլորտի դերը պայմանավորված է երկրի համախառն ներքին արդյունքում բարձր տեսակարար կշռով, գյուղական համայնքների ամրապնդման, գյուղական բնակչության կենսապայմանների բարելավման, ինչպես նաև՝ պետության պարենային անվտանգության հիմնախնդիրների լուծման առանձնահատուկ նշանակությամբ: Այս տեսան-

կյունից հատկապես հետաքրքրական է ագրոպարենային համակարգի ապրանքային շուկաների ուսումնասիրությունն ու դրանում մրցակցային վիճակի գնահատումը:

ՀՀ ագրոպարենային համակարգի ապրանքային շուկաներն ընդհանուր առմամբ ունեն ցածր կենտրոնացվածության մակարդակ և իրենցից ներկայացնում են մրցակցային շուկաներ, որոնք բաց են և չունեն մուտքի խոչընդոտներ: Այստեղ պոտենցիալ մրցակիցների համար որպես խոչընդոտ կարող է հանդես գալ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը կամ չհիմնավորված վարչական միջամտությունները:

Ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի ապահովումն ավելի ու ավելի է կարևորվում այնքանով, որ հակամրցակցային գործողությունների՝ գերիշխող դիրքի չարաշահումների, համակենտրոնացումների ձևավորման, անբարեխիղճ մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների և այլ դրսևորումների արդյունքում խեղաթյուրվում է ազատ մրցակցությունը, մասնավորապես՝ ոլորտում գնագոյացման բնական կառուցակարգը՝ լուրջ վնաս հասցնելով ինչպես սպառողների շահերին, այնպես էլ մրցակիցներին:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով, անկասկած կարելի է եզրակացնել, որ ներկայացված ատենախոսության թեման արդիական է և հրատապ:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակներն են՝

- բացահայտել մրցակցային միջավայրի ապահովմանն ուղղված պետական կարգավորման առաջնային խնդիրները ՀՀ ագրոպարենային ոլորտում,
- մշակել բարեխիղճ մրցակցային միջավայրի բարելավմանն ու կիրառվող քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումներ և առաջարկություններ:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար հետազոտության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տնտեսական մրցակցության հիմքերը շուկայական հարաբերություններում և հետազոտել մրցակցային միջավայրի ձևավորման պայմանները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում,
- վերլուծել մրցակցության կարգավորման հիմքերը և զարգացման փուլերը Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում,
- ուսումնասիրել ագրոպարենային համակարգում մրցակցության պետական կարգավորման միջազգային փորձը,
- վերլուծել տնտեսական մրցակցության իրավիճակը Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի մի շարք ապրանքային շուկաներում և վերհանել մրցակցային առկա խնդիրները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության մրցակցային միջավայրի կարգավորման օրենսդրական դաշտը և դրա ազդեցությունը ագրոպարենային համակարգում իրականացվող բարեփոխումների վրա,
- վերլուծել ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության արդյունավետությունը պայմանավորող գործոնները և ներկայացնել դրանց բարելավման ուղիները,
- մշակել Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի կարգավորման հայեցակարգային դրույթներ:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջաբանում հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության արդյունքներն ու գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացվել են մրցակցային միջավայրի կարգավորման անհրաժեշտության հիմնավորումը, մրցակցային միջավայրի կարգավորման տեսական հիմքերը և մեթոդաբանությունը, ինչպես նաև՝ միջազգային փորձը ագրոպարենային համակարգում:

Ատենախոսության երկրորդ գլխում ուսումնասիրվել են մրցակցային միջավայրի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ ագրոպարենային ոլորտում, մասնավորապես՝ կատարվել է տնտեսական մրցակցության իրավիճակային վերլուծություն ՀՀ ագրոպարենային ոլորտի առանձին ապրանքային շուկաներում, ինչպես նաև՝ վեր են հանվել ոլորտում տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ գլխում բացահայտվել են տնտեսական մրցակցության պաշտպանության կարգավորման կառուցակարգերի բարելավման հիմնական ուղիները ՀՀ ագրոպարենային ոլորտում, ինչպես նաև՝ առաջադրվել են ոլորտում տնտեսական մրցակցության քաղաքականության մշակման հայեցակարգային մոտեցումներ:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը հետևյալն են.

- ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի և տնտեսական մրցակցության պաշտպանության գործընթացի համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ ագրոպարենային համակարգի ապրանքային շուկաներում, մշակվել են դրանց հաղթահարման ուղիները,

- մշակվել են ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական լիազոր մարմնի լիազորությունների ընդլայնման և գործնական կիրառման կատարելագործման կառուցակարգեր,
- ՀՀ ագրոպարենային համակարգում սպառողների շահերի պաշտպանության նպատակով բացահայտվել են առկա հիմնախնդիրները, մշակվել են դրանց լուծման ուղիները,
- մշակվել են ՀՀ ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության կատարելագործման ռազմավարական դրույթներ:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը պայմանավորված է կիրառական նշանակություն ունեցող առաջարկությունների մշակմամբ և ՀՀ ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության կատարելագործմանն ուղղված գործընթացներում դրանց կիրառմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային էկոնոմիկայի ու Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնների համատեղ նիստում: Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակվել են հեղինակի հրապարակած 12 գիտական հոդվածներում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում, այնուամենայնիվ բացահայտվել են որոշակի թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխում տեսական հիմքերը մեծամասամբ ուսումնասիրված են արտասահմանյան գրականության հիման վրա: Աշխատանքը կշահեր, եթե տեսական հիմքերը ներկայացվեին և վերլուծվեին նաև հայ հե-

ղինակների գիտական աշխատանքների և ուսումնասիրությունների հիման վրա:

2. «Երշիկ և նրբերշիկ» ապրանքային շուկաներում ներկայացվել է վերամշակող կազմակերպությունների կողմից մսի տեսակների ձեռքբերումը և ամեն մի տեսակում ընկերությունների մասնաբաժինները, աշխատանքը կշահեր, եթե հումքի ձեռքբերման շուկան դիտարկվեր և վերլուծություններ կատարվեր որպես առանձին շուկա, առավել ևս, որ աղյուսակներ 2.2.24-ում և 2.2.25-ում ներկայացված է երշիկի և նրբերշիկի արտադրության համար որպես հումք օգտագործված տավարի, խոզի և հավի մսի ծավալները և դրանցում տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները, ինչպես նաև աղյուսակ 2.2.23-ում ներկայացված է մսի նշված տեսականիների մաքսային դրույքաչափերի փոփոխությունների վերաբերյալ տվյալները:

3. 3-րդ գլխում թռչնաբուծության ոլորտում հավասար մրցակցային պայմանների ապահովմանը որպես խոչընդոտ ներկայացվում է չփաթեթավորված և կիլոգրամով իրացվող հավի մսի իրացումը առանց դրոշմապիտակի, մինչդեռ փաթեթավորված հավի մսի համար սահմանված է դրոշմապիտակի պարտադիր պայման: Խնդրի կարգավորման համար ատենախոսությունում որպես լուծում առաջարկվում է հավի մսի իրացումն իրականացնել միայն փաթեթավորված և պարտադիր դրոշմապիտակով՝ ստվերի կրճատման և հավասար պայմանների ապահովման համար: Նշված դրույթը, մեր գնահատմամբ նշանակալից կարևորություն ունի և պետք է արտացոլվեր նաև ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

Եզրակացություն

Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը արդյունք է հեղինակի ինքնուրույն գիտական հետա-

զոտության: Աշխատանքում ստացված արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները, որոնք իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից հրապարակված 12 գիտական հոդվածներում:

Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանի «Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում» թեմայով ատենախոսությունը բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ի. Զ. Ալեքսանյան**

17 դեկտեմբերի 2021 թվականի

Տնտեսագիտության թեկնածու Իլոնա Զավենի Ալեքսանյանի ստորագրության իսկությունն հաստատում եմ
ՀԱԱՀ գիտ. քարտուղար, գ.գ.թ. դոցենտ **Գ. Ավագյան**